№ 84 Մայիսի 21 (Յունիսի 2) 1880 Մայիսի 21 (Յունիսի 2) № 84

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիական դեսպան Գօշէնի յանձնարարութիւն։ Պարսկաստան։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Գերմանիայից։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Խենթը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Անգլիական մինիստրութեան փոխվելը այն երևոյթն է Եւրոպայի քաղաքական կեանքի մէջ, որ այս րոպէիս զբաղեցնում է ամենքին։

Անգլիական ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը և Գլադստոն-Գրէնվիլի մինիստրութեան կազմելը մեծ նշանակութիւն ունի ոչ թէ միայն նոյն իսկ Անգլիայի համար, բայց և ամբողջ Եւրոպայի և ամբողջ լուսաւորված աշխարհի համար։

Եթէ մի անցաւոր հայեացք ձգենք տասն և իններորդ դարի պատմական ամբողջ ընթացքի վրա, կը համոզվենք, որ շատ անշան ընդմիջումներով, ներկայ դարի գրեթէ ամբողջ ընթացքի ժամանակ տիրապետում էր, կամ առաջին դեր էր խաղում Եւրոպայում, թէև փոփոխապէս այս կամ այն պետութիւն, բայց միշտ մի զինուորական պետութիւն։

Լուսաւոր, տասն և իններորդ դարը ձեռք ձեռքի տուած էր ընթանում ամենաարիւնահեղ պատերազմների հետ, և իսկապէս արդեօք էր լինում Եւրոպայի կանոնաւոր խաղաղ զարգացման։ Այլ ևս չենք խօսում Նապոլէոն I-ի կործանիչ պատերազմների մասին, որոնք հետևանք էին ֆրանսիական աշխարհակալութիւնների։ Բայց վեր առնենք միայն եւրոպական քաղաքական կեանքի ամենավերջին տարիները։

Վեր առնենք Եւրոպայի կեանքի վերջին երեսուն տարին, — և ի՞նչ ենք տեսնում...

Յիսուններորդ թուականներից սկսած Եւրոպայում առաջին դեր խաղացող և հնացած պետութիւններին ուղղութիւն տուող պետութիւնը՝ զինուորական մի պետութիւն էր, Նապոլէոն III-ի Ֆրանսիան։ Նապոլէոնի անկումից յետոյ, երբ Ֆրանսիան դադարեց զինուորական պետութիւն լինելուց, դարձաւ մի խաղաղ հանրապետութիւն, նա այլ ևս չունեցաւ իր առաջվայ նշանակութիւնը։ Նրա տեղը հանդէս դուրս եկաւ, որպէս Եւրոպայում առաջին դեր խաղացող, դարձեալ մի զինուորական պետութիւն, միացած Գերմանիան։ Վերջին ժամանակները Գերմանիան սկսեց հետզհետէ կորցնել այն սկզբնական նշանակութիւնը, որ ստացաւ Ֆրանսիայի հետ ունեցած պատերազմից յետոյ և Եւրոպայի քաղաքական կեանքի մէջ սկսեց առաջին դերը խաղալ մի այլ պետութիւն, բայց դարձեալ մի զինուորական պետութիւն. դա Ռիկոնֆիլդի Անգլիան էր։

Այդպիսով մի քառորդ դարից աւելի Եւրոպան զինուորական ոգով էր կրթվում, նրա քաղաքական կեանքը գտնվում էր միշտ զինուորական ուղղութիւն ունեցող այս կամ այն առաջնակարգ պետութեան ներգործութեան տակ։ Իսկ Եւրոպան, յայտնի է, ազդեցութիւն ունի և աշխարհիս հնացած երկիրների քաղաքական կեանքի ուղղութեան վրա։

Բայց յանկարծ տեսարանը փոխվում է։ Առաջնակարգ պետութիւն, Եւրոպայի քաղաքական կեանքի մէջ ամենից մեծ բարոյական ազդեցութիւն ունեցող պետութիւն հանդիսանում է մի զօրեղ, բայց խաղաղասէր պետութիւն, մի պետութիւն, որի ուղեցոյցն է՝ մարդասիրութիւն և ազգերի խաղաղ, ինքնուրոյն զարգացում....

Դա այժմեան Անգլիան է։ Պարզ է որ այդ տեսակ կերպարանափոխութեանը վիճակված է մի մեծ յեղափոխութիւն գործել Եւրոպայի, ուրեմն և աշխարհի

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

I.Ը.

«Լուսաւորչի քամին» բարձրացաւ և ցերեկվայ դժոխային տօթը տեղի տուեց երեկոյեան զովութեանը։ Այդ բարերար քամին ոչ միայն Վաղարշապատի, այլ ամբողջ արարատեան դաշտի կենսատու ոգին է, որ ամառնային օրերում չարունակ փչում է ամեն երեկոյ։ Եւ զուր չէ ասում ժողովրդական աւանդութիւնը, որ մեր Լուսաւորիչ հայրը նրան սահմանեց իր ժողովուրդը հիւանդութիւնից ազատ պահելու համար։

Վանքի արեղաները կէսաւուր հանգիստ քնից յետոյ, դուրս էին եկել իրանց որջերից և զոյգ-զոյգ զբօսնում էին Ներսէսի լճի շուրջը, գեղեցիկ ճեմելիքների մէջ, որ հովանաւորված էին ծառերի խիտ կամարների ներքոյ։ Իսկոյն աչքի էր զարկում, որ զբօսնող հայրերը չէին կազմում խումբեր, այլ բաժանված էին առանձնացած զոյգերի, կամ բոլորովին միայնակ էին մեն գալիս։ Դրանք նմանում էին այն արարածներին, որոնք իրանց հեռու են պահում ընկերական կեանքից, այն պատճառով միայն, որ վախենում են միմեանց մօտենալ։ Կասկածը, անմիաբանութիւնը, անհաւատարմութիւնը առանձնացրել էին նրանց,—և այդ կոչվում է վանական եղբայրութիւն։

Լիճը գտնվում էր մի արհեստական բարձրաւանդակի վրա, որ կառուցված էր կոփածոյ քարերից։ Նրա ստորոտից մինչև Գայիանէի վանքը տարածված էր հին գերեզմանատուն։ Մի քանի տեղ փորում էին նոր գերեզմաններ, մի քանի տեղ հողով ծածկում էին արդէն փոսերի մէջ դրած մարմինները։ Թիերը և բրիչները գործում էին։ Քահանան փրփրթալով, աղօթքներ կարդալով, ճիշդ ասած՝ ոչինչ չը կարդալով, մի գերեզմանից դէպի միւսն էր վազում և կատարում էր թաղման խորհուրդը։ Այդ բոլորը գործվում էր խորին լռութեան մէջ։ Ոչ բարեկամի լացը, ոչ ազգականի արտասուքը չէին առաջնորդում հանգուցեալներին դէպի ոգիների աշխարհը, կարծես, նրանք շատ ուրախ էին, որ թշուառ մարդիկ, աղատվելով տաժանական կեանքից, գերեզմանի մէջ վերջապէս պէտք է հանգստութիւն գտնէին։ Թաղում էին ալաշկերտցի գաղթականներին։

—Ո՛րքան շատ մեռնում են, ասաց արեղաներից մէկը իր հետ մանեկող ընկերին։

—Մի և նոյն է, պատասխանեց ընկերը սառնասրտութեամբ,—այնտեղ քրդերը և թուրքերը պէտք է կոտորէին, այստեղ գոնէ իրանց մահով են մեռնում։—Բայց մենք հեռացանք հարցից, չարունակեց նա ընդհատված խօսակցութիւնը,—կրկնում եմ քեզ, որ նրան պէտք չէ հաւատալ, ամենևին պէտք չէ հաւատալ։ Նա մօտենում է մեզ, իրան բարեկամ և մտերիմ է ձևացնում, համակրութիւն է ցոյց տալիս, և ուրիշ հազարումէկ օյիններ է հանում, բայց այդ բոլորը կեղծ է, նա այսպիսով աշխատում է մեզանից գաղտնիքներ որսալ և յայտնել, ուր որ հարկն է։ Նա լրտես է, կատարեալ լրտես։ Եւ այդ պատճառով նա այնքան լաւ ընդունված է «ի վերին Երուսաղէմի մէջ»։ Շատ հաւանական է, որպէս ինքը յոյս ունի, շուտով եպիսկոպոս կը դառնայ և մի հարուստ թեմի առաջնորդ կը լինի։

—Բոլորը, ինչ որ ասեցիր, ուղիղ է, բայց վերջին երկուսը չի ստանայ։ «Զօրրորդը» խոստանալու համար խիստ առատաձեռն է, բայց կատարելու մէջ չափազանց ժլատ։ Կամենում են միայն առժամանակ այդ տխմարի գլուխը թափ տալ, որքան իրանց պէտք է, յետոյ պոչը կը կտրեն և բաց կը թողնեն, նրա պաշտօնը աւելի յարմար մէկին յանձնելով։—Տես, երկու նոր մեռելներ ևս հիմայ բերեցին...

—Թող տուր, թէ Աստուած կը սիրես, այդ քո մեռելները,—բայց նա այնտեղակ աղուէսներից չէ, որ շուտ խաբվի։

—«Խելացի աղուէսը երկու ոտքիցն էլ թալաքի մէջ է ընկնում։»

—Կամաց, թող անցնեն...

Ճեմելիքի հակառակ կողմից յայտնվեցան երկու ուրիշ արեղաներ, որոնք մօտենալով առաջիններին, նոյնպէս դադարեցրին իրանց խօսակցութիւնը։ Դրանք երկուսն էլ սինոդի անդամներ էին։ Երբ փոքր ինչ հեռացան, դարձեալ չարունակեցին խօսակցութիւնը.

—Աճուրդը հիմայ պէտք նշանակել տալ. այժմ ամենայարմար ժամանակն է։

—Ի՞նչու։

—Նրա համար որ, մեզ յայտնի է, թէ այդ եկեղեցական կալուածքները ովքեր են կապալով վեր առնում։ Պարոնները՝ Ե...,Մ...և Խ.... որոնք միշտ այդ կալուածների կապալառուներ են եղել, այժմ իրանց առանձին գործերով զնացել են մէկը Ալէքսանդրապոլ, միւսը Իգդիր, երրորդը սատանան գիտէ, թէ որ ջհաննամը։ Դրանց բացակայութիւնից մենք կարող ենք օգուտ քաղել։ Եթէ աճուրդը այժմ նշանակել կը տանք, շատ պարզ է, որ կապալը կը մնայ պ. Սաթայէլեանի վրա, որը իր անունով կը վեր առնի, ի հարկէ, մեզ հետ գաղտնի ընկերութեամբ։

—Բայց, որքան ինձ յայտնի է, պ. Սաթայէլեանը այնքան պատրաստի փող չունի, որ կարողանայ գրաւական ներկայացնել։

—Այդ ես էլ գիտեմ, բայց դրանով գործը չի խանգարվի, գրաւականը մենք կը տանք, նա իր կողմից կը ներկայացնէ։

—Դու պատրաստի փող ունես։

— Տօկսաբեր արժէթղթեր ունեմ։

—Մի և նոյն է։ Ուրեմն էգուց ժողովի մէջ աճուրդի հարցը կը բարձրացնենք։ Բայց ես վախենում եմ, որ «վերևից» կը խառնեն գործը։

—Չեն կարող, միթէ այդ «հոսսոները» իրանք մի և նոյնը չեն անում, ինչ բանի վրա որ մտածում ենք մենք։ Եթէ «փոքր գլուխ» մաղ կը խառնի, ես նրա ականջին մի բան կասեմ, և իսկոյն կը լռէ։

Այսպէս ոմանք միաբանութեան մէջ կատարվող ինտրիգների վրա էին խօսում, ոմանք իրանց գաղտնի սպեկուլացիաների վրա էին խօսում, բայց ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, թէ ինչ է կատարվում իր շուրջը, ոչ ոք չէր մտածում այն բանի վրա, թէ ինչպէս ալաշկերտցին, զրկված բնիկ երկրից, պանդուխտ, անտէր և անխնամ, ճանճերի նման կոտորվում էին։ Ոչ ոք չէր հետաքրքրվում այն հարցով, թէ ինչ էր եղել այդ թշուառների գաղթականութեան պատճառը, կամ ինչ կը լինի նրանց վախճանը մի օտար և անծանօթ երկրում։

Մի քանի արեղաներ, հաւաքված միասին, իրանց ամենօրեայ երեկոյեան սովորութեան համեմատ, նստել էին անտառում, գեղեցիկ պարսկական խալիչաների վրա և թէյ էին վայելում։ Մանկահասակ փոքրաւորները, նրանցից սակաւ ինչ հեռու, միմեանց հետ քրթմնջալով, ծիծաղելով և հանաքներ անելով, կարգի էին դնում թէյի ահագին պատրաստութիւնը։ Այնտեղ կար սեր, կարագ, սպիտակ հաց, ոսմ և ամեն ինչ։ Երեկոյեան զովը և անտառի մաքուր օդը բաց էին արել սուրբ հայրերի ախորժակը։ Նրանք խմում էին, ուտում էին, ուրախանում էին, առանց մտածելու, որ նոյն անտառի ծառերի տակ, խոնաւ գետնի վրա, այժմ ընկած էին հարիւրաւոր քաղցած ընտանիքներ։

—Այդ ոսմը շատ լաւն է, ինչ գեղեցիկ հոտ ունէ, ո՞րտեղից ստացաք, հայր սուրբ, հարցրեց արեղաներից մէկը խորին զմայլութեան մէջ ճաշակելով ոսմով խառնած թէյի բաժակը։

—Ո՞րտեղից ստացայ...կրկնեց հայր սուրբը, որի խցից բերվել էր անուշահոտ ըմպելին,—դու չես իմանում, որ իմ խուցը այն ուխտատեղիներից է, ուր մատաղը իր ոտքովն է գալիս...*)

*) Ամայի և ժողովրդից մոռացված տեղերում գտնված կիսաւեր մատուռների և վանքերի մասին աւանդութիւններ կան, որ նրանց տօնի օրերում վայրենի անասունները իրանց յօժարութեամբ գա-

միւս մասերի քաղաքական կեանքի մէջ։

Զը մոռանանք որ Եւրոպան իշխում է ամբողջ երկրագնդի վրա։

Եւ մինչև որ Բիկոնսֆիլդի Անգլիան ձգտում էր վճռել արևելեան խնդիրը պատերազմի միջոցով, —ազատամիտ Անգլիան, Գլադստոնի ղեկավարութեամբ, յայտնում է թէ դիտաւորութիւն ունի նոյն հետևանքին հասնել միւս պետութիւնների հետ համերաշխ գործողութեամբ, նրանց օգնութեամբ, որովհետև բոլորի, մանաւանդ Ռուսաստանի նպատակն էլ նոյն է արևելքում՝ միջոց տալ այդ երկիրների մէջ քաղաքակրթութեան տարածելուն։

Եւ ահա այժմեան Անգլիան կամենում է վճռել արևելեան խնդիրը ոչ թէ պատերազմով, ոչ թէ հրով և սրով,—այլ միջոց տալով թիւրքիահպատակ ազգերին խաղաղ և ինքնուրոյն կերպով քաղաքականապէս զարգանալու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք ՂՈՒԲԱՅԻՑ, պ. Ն. Աբիսողոմեանցից 70 բուբլ յօգուտ Վանի սովեալների, որ հաւաքվեցաւ նուիրատուութեամբ։ Ստորագրութիւնը շարունակվում է։

—

Պ. Սարգիս Աւագեանց ուղարկել է Հայոց Գեառգեառ գիւղից 3 բուբլ յօգուտ սովատանջ թիւրքաց հայերի։ Այդ գումարից 2 բուբլ պարոնը ինքն է նուիրում, իսկ 1 բուբլ նրա բարեկամներից մինը։

—

ՇԱՄԱԽՈՒՑ պ. Սարգիս Համբարձումեանից ստացանք այս օրերս 60 բուբլ հետևեալ նամակով։ «Շամախու հայ-աւետարանականաց միաբանութիւնը, չը նայելով որ ի նպաստ իր սովեալ ազգայնոց զցած է արդէն ազգի գանձանակի մէջ իր աղքատիկ լուման, բայց տեսնելով իր արիւնակիցների տակաւին ճնշվելը սովի անգութ հարուածի տակ, կամեցաւ կրկին գէթ չնչին լումայով իր ազգայնոց սիրտը ամոքելու, վասնորոյ յանձնեց ինձ 60 բուբլ ձեզ ուղարկելու, ի նպաստ իր սովեալ եղբայրներին։»

—

Յովհաննէս Խունեանց և նրա որդի Մնացականը ուղարկեցին մեզ ՇՈՒՇՈՒՑ 50 բուբլ ի նպաստ Հայաստանի սովատանջների։

—

Թամամշեվի քարվանսարայում դրված է այժմ մի փոքրիկ, երկու սենեակներից բաղկացած տեղափոխելի տուն, որ Ֆրանսիայից է բերված։ Ամբողջ տունը շինած է փայտից և երկաթից. նրան կարելի է չորս ժամվայ մէջ քանդել և նորից շինել։ Այդ գեղեցիկ շինութիւնը ծախվում է։ Այդ տեսակ շինութիւններ շատ յարմար կը լինէին ամարանոցների բնակութեան, պատերազմական հիւանդանոցների և այլ այդ տեսակ ժամանակաւոր հիմնարկութիւնների համար։

—

Ցիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ վաղը այն է հինգշաբթի օր, մայիսի 22-ին, ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանում կը քննվի Կովկասեան Յէնդարական կոմիտէի դատը «Մշակի» խմբագիր, Գրիգոր Արծրունու դէմ։

—

Ստացանք 56 բուբլ յօգուտ Հայաստանի սովատանջների Թիֆլիսաբնակ հետևեալ անձինքներից։ Ալէքսանդր Քալանթարեանց 5 բ., Ստեփան Արասխանեանց, Պ. Սուրգունեանց, Ա. Սուսաննեանց, Ս. Ղազարեանց իւրաքանչիւրը 3 բուբլ, Վասիլ Տէր-Մուրադեանց, Յարութիւն Գասպարեանց, Սարգիս Սարգսեանց, Յարութիւն Մնացականեանց, Ալէքսանեանց և Օհան Տէր-Օհանեանց իւրաքանչիւրը 2 բուբլ, Ռ. Խ-եանց, Վահան Երիցեանց, Կ. Կամոյեանց, Ց. Շահբուղաղեանց, Ռմն, Ց. Թումանեանց, Սարգիս Գասպարեանց, Ն. Մէլիք-Մուրադեանց, Պ. Տէր-Պետրոսեանց, Մ. Ղուլիջանեանց, Հայ մշակ, Ցոլակ, Ց. Մէհերեանց, Ս. Պետրոսեանց Հ. Սուլխանեանց, Ռմն, Հ. Աւետիսեանց, Գ. Շահնազարեանց, Ս. Մէլիք-Ղարակեոզեանց, Հ. Ազարէկեանց, Ա. Ազոյեանց, Ս. Մատինեանց, Մ. Փանեանց, Գ. Տապտապեանց, Բարխուդարեանց, Ե. Դովիանեանց և Վ. Տէր-Նիկողոսեանց իւրաքանչիւրը 1 բուբլ։ Ընդամենը 56 բուբլ։

—

Հեռագրով մեզ հաղորդում են ՄՕՍԿՎԱՅԻՑ, որ չուտով գալու է Թիֆլիս յայտնի երաժիշտ, ցիտրէ վրա ածող պ. Բաուէր և նրա հետ միասին գալու է յայտնի ռուս վերծանող (чтецъ) Գրիգորովկի։ Նրանք տալու են մի երկու կօնցէրտներ Թիֆլիսում։ Այժմ իմացանք որ պարոնները հասած են արդէն Թիֆլիս։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են, որ տեղային հայկաթոլիկ հասարակութեան մէջ բաւական խռովութեան և հակառակութիւնների առիթ է տալիս իրանց ղպրոցի խնդիրը։ Ժողովուրդը հոգաբարձութիւնից հաշիւ է պահանջում, բայց գործը օրէց օր ձգվելով, զանազան երկպառակութեանց պատճառ է տալիս։ Թէև նշանակված են ժողովրդից մի քանի հաշուատես անձինք, բայց տակաւին ոչինչ հետևանքի չեն հասել։

—

Մեզ գրում են ԱԳԱՐԱԿ գիւղից, որ չը նայելով մերձակայ բոլոր գիւղերում սաստիկ թանգութիւն է տիրում, բայց Ադարակ գիւղում բաւական առատութիւն կայ, այնպէս որ, ամեն մի գիւղացի այս տարի մօտ հազար բուբլու ցորեան է ծախել։ Այդ հարստութեամբը ագարակցիք պարտական են իրանց գիւղի պտղաբեր և արդաւանդ հողին։

—

ԱԳԱՐԱԿ գիւղից մեզ գրում են, որ օրեզչիկ պ. Գ. Ս. զանազան խարդախ մէջոցներով գիւղացիներին տանջում է և նրանցից փողեր է առնում։ Այդ մի և նոյն անձը 1876 թ-ին 3,500 բուբլի վնասի պատճառ եղաւ գիւղացիներին։ Նա իր հետ միաբանել է մի քանի իր նման մարդիկ, որոնք միամիտ և խեղճ գիւղացիների տգիտութիւնից օգուտ քաղելով, հարստահարում են նրանց։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 27-ին թատրոնասէրների խումբը մի ներկայացում տուեց յօգուտ տեղային աղքատների։ Ներկայացրին «Արշակ.» II ողբերգութիւնը։ Չը նայելով որ ներկայացումը չատ լաւ անցաւ, բայց հանդիսականների թիւը սակաւ էր, և ծախսերը դուրս գալուց յետոյ, միայն 30 բուբլի արդիւնք մնաց։ Պատճառը աղքատաց հոգաբարձուի անհոգութիւնն էր, որին յանձնած էին տոմսակները ծախելու։— Փ. գիւղի չինական տանուտէրը մի գիւղացու այնքան սաստիկ ծեծում է մտրակով, որ ողորմելին նոյն օրը վախճանվում է։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ ապրիլի 27-ին ամեն տարվայ սովորութեան համեմատ կատարվեցաւ Մոսկվայի բնակիչ պ. Յովհաննեանցի պապի հոգեհանգիստը, որի գերեզմանը գտնվում է քաղաքից մի վերստ և կէս հեռաւորութեան վրա։ Այնտեղ տեսնվում է մի անշուք տապանաքար առանց արձանագրութեան, միայն մի խաչ քանդակված վրան։ Այս տարի հոգեհանգիստը աւելի հանդիսաւոր կերպով կատարվեցաւ։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, որ տեղական վարչութիւնից հրամայված է գիւղացիներին միւս մշակութիւնների հետ և կարտոֆիլ ցանել։ Բացի դրանից կարգադրութիւն է արած գիւղերում օդի մաքրութեան համար ուռիներ տնկել։ Լաւ կը լինէր, որ հրամայէին գիւղացիներին մաքրել իրանց խրճիթների առջև կուտակված աղբանոցները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԳՕՇԵՆԻ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը։

Այն յանձնարարութիւնը, որի կատարելու համար պ. Գօշեն ուղևորվեցաւ Կ. Պոլիս, Արևմտեան Եւրոպայի քաղաքական շրջանների մէջ զանազան խօսակցութիւնների, դատողութիւնների և ենթադրութիւնների առարկայ է դարձել։ Ամենքը խոստովանվում են, որ արևելեան հարցը փոփոխվում է, նոր կերպարանք և նոր ուղղութիւն է ստանում։ Անգլիական ազատամիտ կուսակցութեան, հետևապէս և Գլադստոնի մինիստրութեան գըլխին, այսուամենայնիւ, մի առանձին տպաւորութիւն չը գործեցին Վարդանի սրտի վրա. նա այդ բոլորը չատ բնական էր համարում. նա առաջուց գիտէր այս տեսակ գաղթականութիւնների կորստաբեր հետևանքները։

—Բոլոր գաղթականները այստեղ՝ Վաղարշապատում են միայն զետեղված, հարցրեց նա։

—Ոչ, Իգդիրից եկան Վաղարշապատ և այստեղից տարածվում են դէպի ամեն կողմեր։ Այժմ Սուրմալուի գաւառից սկսած, գաղթականները ցրված են մինչև Նոր Բայազէդ, մինչև Հին-Նախիջևան. ամեն տեղ, ամեն գիւղերում կարելի է գտնել նրանց։

—Ժողովուրդը ինչպէս է վերաբերվում դէպի իր պանդուխտ եղբայրները։

—Ժողովուրդը խիստ մարդասիրաբար է վարվում. օթևան է տալիս, կերակրում է, հագուստ է տալիս, և չէ խնայում, ինչ բանով որ կարող է օգնել։ Պէտք է ասած, որ այստեղի ժողովուրդը ինքն էլ սաստիկ կարօտութեան մէջ է. պատերազմի պատճառով այժմ ամեն ինչ թանգացել է։ Բայց գաղթականներին աւելի բժշկական օգնութիւններ են հարկաւոր, քան թէ հաց. զանազան հիւանդութիւններ անխնայ կոտորում են։

Գիշերային մութը բոլորովին պատել էր վանքի շրջակայքը։ Աբեղաները քաշվել էին իրանց խուցերը։ Բայց խորհրդաւոր երգի ձայնը կրկին լսելի եղաւ անտառի խորքից.

«Բուլբուլն է հաքել ի յոտին կօչիկ,
«Զվարդն կը փնտռէ սիրով, անուշիկ»...

—Դու այժմ ուր պիտի գնաս, հարցրեց վարդապետը Վարդանից, ոտքի կանգնելով։

—Ինքս էլ չը գիտեմ...

—Գնանք ինձ մօտ։

—Ես չէի ցանկանայ, որ այստեղ ինձ տեսնէին։

—Վանքում այժմ քեզ ոչ ոք չէ կարող ճանաչել։

(կը շարունակվի)

—Իմանում եմ...լաւ է այսպիսի ձգողական զօրութիւն ունենալ։

Արևը մտել էր արդէն։ Անտառի մէջ մառայը հետզհետէ թանձրանում էր, թէև ոսկեզօծ ամպերը տակաւին վառվում էին արեգակի վերջին ճառագայթներից։ «Վուսաւորչի քարին» փոքր ինչ մեղմացել էր և ծառերի տերևները հազիւ շարժվում էին մի խուլ, կախարդական սօսափիւնով։ Անտառի խորին լռութիւնը երբեմն ընդհատվում էր տխուր հառաչանքներով։ Գիշերը մօտենում էր։ Խաւարի մէջ աւելի շուտ զարթնում են դառն յիշողութիւնները։ Բացօթեայ, գեանատարած, մերկ և անօթի ալաշկերտցին, մի սարսափելի երազից սթափված մարդու նման, դեռ նոր սկսել էր զգալ իր վիճակի դառնութիւնը։ Նա մտածում էր, որ հարստութիւն ունէր, իսկ այժմ ըստիպված է մուրացկանութեամբ ապրել։ Նա մտածում էր, որ տուն և օթևան ունէր, իսկ այժմ բաց երկնքի տակ է ապրում։ Նա մտածում էր, որ զաւակներ ունէր, իսկ այժմ չը կան նրանք. ո՞րտեղ կորան, ո՞վ տարաւ, ինչ եղան,— ինքն էլ չը գիտէր։ Բոլորը կորաւ մի խառնաչփոթ և սոսկալի խռովութեան մէջ, երբ մայրը որդուն մոռացել էր, երբ եղբայրը մոռացել էր քրոջը, երբ տղամարդը կորցրել էր ամուսնին,—երբ ամեն մարդ, հալածված թուրքի սրից և հրից, աչխատում էր իր գլուխը միայն ազատել։—Ամեն մարդ սրտումը անդարմանելի վերք ունէր, ամեն մարդ կորցրել էր մի բան, որ նրա համար աշխարհի բոլոր բաներից թանգագին և անփոխադրելի էր։ Այս էր պատճառը, որ ամբողջ Վաղարշապատը այս գիշեր թնդում էր գաղթականների հառաչանքներով, որոնք կատարում էին մի ընդհանուր սուգ, սուգ, որի համար մխիթարութիւն չը կար...

Այդ միջոցին մի պարթևանձնեայ տղամարդ, անցնելով անտառի ծառերի միջով, հետաքրքիր աչքերով նայում էր գաղթականների վրա, մօտենում էր նրանց, խօսեցնում էր և դարձեալ շարունակում էր նրանց դուռը, և անապատի հովիները բռնելով, մատաղ են անում։

կում էր իր ընթացքը։ Տխուր, մտայոյզ կերպարանքը այդ տղամարդի, երեսի այրական արտայայտութիւնը, համարձակ և անձնավստահ շարժմունքը ակամայ ուշադրութիւն էին դարձնում իր վրա։ Նա դուրս եկաւ անտառից, անցաւ Գայիանէի վանքը և կանգնեց գերեզմանատան մօտ։ Այստեղ դեռ աշխատանքը չէր վերջացել... դեռ թաղում էին...։

Նրա ականջին զարկեց երգի ձայն։

«Բուլբուլն է հաքել ի յոտին կօչիկ,
«Զվարդն կը փնտռէ սիրով, անուշիկ»...

—Կոտորվէք դուք, ասաց իր մտքում անծանօթ տղամարդը և շարունակեց ճանապարհը։

Երգի ձայնը լսվում էր անտառի խորքից, ուր այժմ աբեղաները, ռօմից ստացած ոգեորութիւնից յետոյ, կատարում էին իրանց գիշերային արշաւանքները։

Անծանօթ տղամարդը մօտեցաւ լճին։ Այստեղ նոյնպէս մի քանի աբեղաներ սև ուրուականների նման դեռ զբօսնում էին։ Բայց մէկը նստած էր անշարժ, միայնակ, որպէս առանձնացած ոգաւոր, որ իր մխիթարութիւնը գտնում է այն դրութեան մէջ, երբ ոչ ոք չէ հարցնում նրանից մի բան, և երբ ոչ ոք չէ դիպչում նրա սրտի վէրքերին։ Արևից այրված, մռայլոտ դէմքը և հնամաշ հագուստը ցոյց էին տալիս, որ այդ աբեղան պէտք է պանդուխտ և աղքատ լինի։ Վանքի քնքոյշ և կոկիկ հագնված միաբաններից ոչ ոք չէր մօտենում նրան, կարծես, վախենում էին պղծվել նրա հագուստներից, թէև այդ պարզ, հովուական հագուստների մէջ ծածկված էր մի մարմին, որ կըրում էր իր մէջ գեղեցիկ և ազնիւ յատկութիւններ։ Անծանօթ տղամարդը կիսախաւարի միջից նկատելով անծանօթ աբեղային, մօտեցաւ նրան։

—Ա՛խ, Յովհաննէս հայր սուրբ, դուք էք։

—Ա՛խ, Վարդան, գոչեց աբեղան և գրկեց նրան։

Աբեղան սուրբ Յովհաննու վանքի վանահայր և մի և նոյն ժամանակ Ալաշկերտի առաջնորդն էր, որ գաղթականների հետ եկել էր ռուսաց հողի վրա, չը կամենալով բաժանվել իր ժողովրդից։

Վարդապետը և Վարդանը նստեցին մի քարի

վրա, որ լճի ափի մօտ ծառայում էր որպէս նըստարան։

—Ե՞րբ եկար, հարցրեց վարդապետը։

—Այսօր, հէնց այս ժամիս, պատասխանեց Վարդանը իր չուրջը նայելով, որ նրանց չը լսեն։

—Ոչ ոքի չը տեսար։

—Դեռ ոչ ոքի։—Այդ խառնիճաղանճ բազմութեան մէջ ումը կարելի է գտնել։ Ես չատ կը ցանկանայի տեսնել Մէլիք-Մանսուրին, լսեցի, որ նա էլ գաղթականների մէջն է։

—Ես նրան տեսայ երկու օր առաջ, պատասխանեց վարդապետը,—այժմ պէտք է Երևանում լինի, կարծեմ, այնտեղ պէտք է տեսնվէր մի քանի պարոնների հետ, որոնք մտածում են մի մասնաժողով կազմել գաղթականների վիճակի համար հոգ տանելու։

—Թիֆլիսում արդէն կազմվել է մասնաժողով։

—Երևանինը պէտք է նրա մի ճիւղը լինի։

—Այստեղ ինչպէս են գնում գործերը։

—Շատ վատ, պատասխանեց վարդապետը տըխուր ձայնով,—մի ամբողջ շաբաթ է, որ այստեղ վէրընկած եմ. Ղազարապատի մի անկիւնում տեղ են տուել. ոչ ոք ինձ վրա չի նայում, ոչ ոք չի էլ ուզում հարցնել, թէ ինչ և որպիսի դառն հանգամանքներ բերեցին մեզ այստեղ։ Ինձ խոստացան, թէ կը տանեն վեհարանը և այնտեղ հարցմունքներ կանեն։ Բայց դժբախտաբար այսպէս օրերը անցնում են։ Ստիպվեցայ գրաւոր կերպով ներկայացնել թշուառ ժողովրդի գաղթականութեան բոլոր պատմութիւնը, և յոյս ունէի, որ դրանից յետոյ կը կանչեն ինձ և բերանացի բացատրութիւններ կը պահանջեն։ Այդ փորձը նոյնպէս մնաց ապարդիւն։ Մինթէ կարելի է մինչև այս աստիճան սառնասիրտ և մինչև այս աստիճան անգութ լինել։ Ես ցուցակը ունեմ, որ 3000 ընտանիքից մինչև այսօր 1500 հոգի մեռել են, որը հիւանդութիւնից, որը քաղցածութիւնից։ Մնացածները, անտարակոյս, նոյնպէս կը մեռնեն, եթէ նրանց վիճակը այսպէս կը շարունակվի։

Վերջին տեղեկութիւնները որքան և ցաւալի լինէին, այսուամենայնիւ, մի առանձին տպաւորութիւն չը գործեցին Վարդանի սրտի վրա. նա այդ բոլորը չատ բնական էր համարում. նա առաջուց գիտէր այս տեսակ գաղթականութիւնների կորստաբեր հետևանքները։

—Բոլոր գաղթականները այստեղ՝ Վաղարշապատում են միայն զետեղված, հարցրեց նա։

—Ոչ, Իգդիրից եկան Վաղարշապատ և այստեղից տարածվում են դէպի ամեն կողմեր։ Այժմ Սուրմալուի գաւառից սկսած, գաղթականները ցրված են մինչև Նոր Բայազէդ, մինչև Հին-Նախիջևան. ամեն տեղ, ամեն գիւղերում կարելի է գտնել նրանց։

—Ժողովուրդը ինչպէս է վերաբերվում դէպի իր պանդուխտ եղբայրները։

—Ժողովուրդը խիստ մարդասիրաբար է վարվում. օթևան է տալիս, կերակրում է, հագուստ է տալիս, և չէ խնայում, ինչ բանով որ կարող է օգնել։ Պէտք է ասած, որ այստեղի ժողովուրդը ինքն էլ սաստիկ կարօտութեան մէջ է. պատերազմի պատճառով այժմ ամեն ինչ թանգացել է։ Բայց գաղթականներին աւելի բժշկական օգնութիւններ են հարկաւոր, քան թէ հաց. զանազան հիւանդութիւններ անխնայ կոտորում են։

Գիշերային մութը բոլորովին պատել էր վանքի շրջակայքը։ Աբեղաները քաշվել էին իրանց խուցերը։ Բայց խորհրդաւոր երգի ձայնը կրկին լսելի եղաւ անտառի խորքից.

«Բուլբուլն է հաքել ի յոտին կօչիկ,
«Զվարդն կը փնտռէ սիրով, անուշիկ»...

—Դու այժմ ուր պիտի գնաս, հարցրեց վարդապետը Վարդանից, ոտքի կանգնելով։

—Ինքս էլ չը գիտեմ...

—Գնանք ինձ մօտ։

—Ես չէի ցանկանայ, որ այստեղ ինձ տեսնէին։

—Վանքում այժմ քեզ ոչ ոք չէ կարող ճանաչել։

(կը շարունակվի)

խաւոր օրգան «Daily News» լրագիրը ասում է, որ գործի վրա այդ նոր տեսակէտից նայելը բոլորովին ճիշդ է և որ կառավարութիւնը պ. Գոշենին տուած յանձնարարութեամբ «սկսում է մի նոր դարագլուխ Թիւրքիայի համար» և ոչ այն մտքով, որ տրվում էր այդ խօսքին արևմտեան Թիւրքասէրներից Դրիմի պատերազմի սկսվելուց յետոյ: Ազատամիտ լրագիրը ասում է, որ Թիւրքիան պահպանվում էր Անգլիայի հովանաւորութեամբ և պաշտպանութեամբ, իսկ այժմ պ. Գոշենին յանձնված է համոզել սուլթանին և նրա խորհրդատուներին, որ Թիւրքիան այսուհետև այլ ևս յոյս չը պէտք է ունենայ վերև յիշված հովանաւորութեան և պաշտպանութեան վրա և որ Թիւրքաց կառավարութիւնը այսուհետև պէտք է ինքը պատասխանատու լինի իր գործողութիւնների համար:

Նոր դեսպանի այդ «ներշնչումը» մի կողմից և պետութիւնների պատրաստվող միաբան ձնշումը Թիւրքիայի վրա միւս կողմից, միասին մի նշանաւոր քայլ են կազմում արևելեան հարցը վերջնականապէս վճռելու համար: Լօնդօնից ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ պետութիւնների ձնշումը Բ. Դրան վրա այն ձևը կունենայ, որ կը հրաւիրէ Թիւրքաց կառավարութեանը անյապաղ վերջացնել յունական և չերնոգորիական հարցերը և վերանորոգութիւններ մտցնել Հայաստանի մէջ: Պ. Գոշեն պէտք է պնդի, որ Բ. Դուռը անպատճառ կատարէ պետութիւնների պահանջները: Եթէ Բ. Դուռը կը մերժէ այդ պահանջների կատարելը, այն ժամանակ Բերլինի մէջ կը հաւաքվի մի լրացնող կոնֆերենցիա առանց Թիւրքիայի մասնակցութեան և այդ կոնֆերենցիան կը քննի ոչ թէ միայն յունական խնդրի լուծելը, այլ ընդհանրապէս բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են Թիւրքիայի մէջ գործերի այնպիսի դրութիւն ստեղծելու համար, որ Բերլինի դաշնագրին համեմատ լինի:

Ինչպէս երևում է Կ. Պոլսի մէջ սկսում են զգալ, որ այժմ նշանաւոր գործեր են կատարվում: Թիւրքաց դեսպանը Լօնդօնում, Մուսուրուս-փաշա, արդէն հրաման ստացաւ անյապաղ Կ. Պոլիս ուղևորվել, որպէս զի Բ. Դուռը նրա խորհուրդներից և ցուցմունքներից կարողանայ օգուտ քաղել:

Ոչինչ յոյս չը կայ, որ անգլիական նախկին դեսպան պ. Հենրի Լայարդ, նորից վերադառնայ Կ. Պոլիս և սկսի իր պաշտօնը վարել: Նա ծախսեց իր բոլոր ձիաները և կառքերը: Նա չէ ծածկում, որ պ. Գոշենի Կ. Պոլիս հասնելուց յետոյ, ինքը վերջնականապէս կը թողնի Թիւրքիայի մայրաքաղաքը:

Այժմ Թիւրքաց կառավարութիւնը բոլորովին նոր դրութեան մէջ է: 1855 թուականից յետոյ այս առաջին անգամն է, որ Թիւրքիան բոլորովին զրկված է Եւրոպայի պաշտպանութիւնից և հովանաւորութենից: Անգլիայի հովանաւորութեան և պաշտպանութեան վրա նա յոյս չէ կարող դնել, իսկ Անգլիային այժմ ոչ ոք չի փոխարինի: Հանրապետական Ֆրանսիան եթէ ուզենար էլ, այնուամենայնիւ անկարող է այդ ժառանգութիւնը ստանալ, Աւստրիայի շահերը նրան թոյլ չեն տալիս այսպիսի դեր խաղալ, ինչ կը վերաբերի Ռուսաստանին, նա անկասկած Թիւրքաց հարստահարութիւնների և անկարգութիւնների պաշտպան չի հանդիսանայ:

Զը նայելով բոլոր այս առածներին, դժուար է հաւատալ, որ Եւրոպայի ձնշումը Թիւրքիայի վրա դադարեցնէ նրա այժմեան անգործունէութիւնը: Սուլթանը և նրա խորհրդատուները անկարող են կատարել նրանց պահանջները: Այդ գործի համար նրանք չունեն ոչ դրամական միջոցներ և ոչ բարոյական բաւականացուցիչ ազդեցութիւն: Եւրոպայի խառնվելը այդ գործի մէջ ոչինչ հետևանք չի ունենայ, եթէ նա չի համոզվի, որ ինքը պէտք է փոխարինի Բ. Դրանը Բալկանեան թերակղզու վրա հանգստութիւն և կարգ վերականգնելու համար: Մեր կարծիքով կառավարութիւնների մի համաձայնութիւն, որ ի նկատի կունենայ այդպիսի փոխարինութիւն, կարող է հասցնել այն նպատակին, որ դրել է Գլադստոն-Գրենվիլի մինիստրութիւնը:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Պարսկաստանի Սալմաստ գաւառից մեզ գրում են, որ սովը թէ այնտեղի և թէ Թիւրքիայի սահմանակից գաւառներում այն աստիճան սաստկութեան է հասել, որ քրդերը Թիւրքիայից իրանց երեխաներին բերում են և ամենաէժանին գներով ծախում են, կամ ձրի տալիս են զանազան մարդկանց պահել, որպէս սեփականութիւն: Օրինակ, Դիլիման գիւղաքաղաքի հրապարակի վրա վաճառվեցան քրդերի շատ տղաներ և աղջիկներ, իւրաքանչիւրը 5 ղրանով, որ մեր փողով հաւասար է 1 ռուբլ 50 կոպէկի:

Ուրմի քաղաքից մեզ գրում են, որ ամերիկացի բողոքական միսիոնարները ստացան իրանց երկրից յօգուտ տեղային սովատանջների մօտ 40,000 ռուբլ, որ բաժանեցին առանց խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 9 մայիսի

Անակնկալ և դառն պարագաներ, մին քան ըզմիւսն ձախող և դժպատեհ, հակառակ ամեն ջանից և ճգանց, հայոց ներկայ ցաւոց վրա կը բարդուին, և եթէ ազգային մեծամեծ նպաստներ չը փութան ձեռն կարկառել, անդէն պիտի սպառնան վտանգ մի մօտալուտ և կործանում մի աղետալից:

Զայս ամենն, տէր, սովոյ արդիւնքն են, սովն որ կարծես թէ բաւ չը համարելով ց'այս վայր այն կոտորածներն զոր գործած էր, այսօր գարնան եղանակի մէջ, կրկին սաստկացեալ ամեն տեղացաւ և մահ կը սփռէ:

Յակաւին երկու օր յառաջ, Վանէն, Կարինէն, Սըղերտէն, մեզ հասած հեռագիր և նամակներ, կը գրեն թէ, սովն սաստկացած է, թէ ամենուրեք ժողովուրդք մերկ և թշուառ ի քաղցոյ և ի հիւանդութենէ մի կմախք դարձած փողոցներու անկիւններն թափառական կը հեծեն կը հեծկլտան, թէ բաւական անձինք սովամահ եղած են և մինչ օգնութիւն կը խնդրեն:

Մենք, տէր, ասա Նոյն իսկ աղետից առջև մեծ և ծանր արդելքներու պատահելով, Բաբերդէն ի Վան ցորեան փոխադրելու համար սամարն $17^1/_2$ լիրայի ցորեան գնել հաղիւ յաջողելով մինչդեռ կը կարծէինք թէ այսպիսի դժուարութիւններով նօթութեան դէմ ցորեան, և ապագայ բարօրութեան համար սերմն պիտի կարողանանք հայթայթել, և այնու ձեզ նման աղնիւ աջակցաց միջոցաւ ըստ բաւականին օգնութիւն մի ընծայել սովոյց, և ահա վրայ կը հասնի հիւանդութիւն մի տարափոխիկ, որ կարծես և թշուառութեան հետ միացած կը սպառնայ ոչնչացնել հայութեան մի մեծ մասն:

Տէր, առանց ընդ երկար նկարագրելոյ նօթութեան և հիւանդութեան ճիրաններուն մէջ չարաչար տանջուող ժողովրդեան մի վիճակն, զոր դուք քաջ գիտէք. Կենտ. Յանձնաժողովս, նկատելով թէ իւր դրամական անձուկ վիճակի մէջ Հայաստանի անթիւ գաւառներու համար հաց, սերմն հողագործական եղինք, անասունք, հիւանդաց հիւանդանոց, բժիշկ և դեղօրայք և այլն, և այլն, անթիւ պէտքեր լցուցանել անկարող պիտի լինի, փութաց անմիջապէս կրկին եռանդեամբ ի Նորոյ նուիրատուաց ողորմած սրտերուն դիմել:

Դուք, տէր, թէպէտ իրօք շատ հանգանակեցիք և մեծ օգնութիւնք ընձեռեցիք, մեր դժբաղդ եղբարց, փոխան ձեր աչխատութեանց, այժմ տեսնելով այս կրկին աղէտք գիտեմք թէ առաւել ևս ի գութ պիտի շարժիք:

Ուստի, սխուր ցաւերով համակեալ, կուգամք վերստին թախանձել ձեզ, որ հայազգի մեծագոյն մասն, այս սպառնալից վտանգէն փրկելու ճգամբ, ինչպէս մինչև ցարդ նոյնպէս և յետ այսօրիկ չը խնայէք ամեն ջանք և ճիգ ի գործ դնել, և այնու առաւել ևս մեծ առիթ տալ մեր այս մեծ և փըրկարար գործոյն յաջողութեան վախճանն ձեզ նըման հզօր և մարդասէր օժանդակաց պարտելոյ: Ներկայ աղետաբեր ժամանակի մէջ յանուն սովելոց ձեր մատուցած մեծ ծառայութիւնն չեմք կարող ուրանալ, ծառայութիւնն մի՝ որ անթիւ թշուառ ընտանեաց կեանք ազատելու կը ճգնի, և որոյ յիշատակն անջնջելի պիտի մնայ անշուշտ:

Կենտրոնական Յանձնաժողովս սովոյ աղետից դարման տանելու ամեն կերպիւ միշտ ջանադիր է, տեղական Մասնաժողովներ կարգած է ի Կարին, ի Վան, որք հրահանգ ընդունած են ցորեան գնել, ամբարել և հետզհետէ բաշխել կարօտելոց թէ ապրուստի և թէ սերման համար: Բաշխման օրինաւորութեան և կանոնաւորութեան մասին նոյն Մասնաժողովներու կողմանէ ամեն սովեալ երկիրներ առանձին պատուիրակներ ղրկուած և ատորադրեալ Մասնախմբեր կազմուած են, որք անընդհատ կաշխատեն դարման մատակարարել սովելոց, տեղեկութիւն մեզ հասցնել հեռագրաւ և թղթաբերաւ:

Այժմ մասնաւոր հոգատարութեան խնդիր ըրած եմք սերմնացանութեան, փաթաթէսի (կարտոֆէլ) մշակութեան և հողագործական անասնոց պակասութեան խնդիրը, թէև պէտք բաղում են և մեր միջոցք սակաւ, սակայն պարտ անձին ունեմք աչխատել և ջանք ի գործ դնել մերայնոց աղետից և թշուառութեան յօգնութեան հասնելու համար, նուիրատու բարերար ազգայնոց և օտարաց չնորհիւ:

Զայս ամենն ծանուցանելով ձեզ, կը խնդրենք որ պարտ ու պատշաճ տեղեկութիւնն հաճիք տալ նաև ձեր պատուական լրագրոյ միջոցաւ:

Ատենապետ Սերովբէ Կիւլպէնկեան

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Բերլին, 9|21 մայիսի

Ուղարկում եմ ձեզ «Post» լրագրի մի համար, որտեղ կան յօդուածներ անգլիական նոր քաղաքականութեան մասին: Մանաւանդ նշանակութիւն ունի lord Granville-ից տուած մեկնութիւնները լորդերի ժողովումը: Կարելի է արդեօք այժմ յուսալ անգլիական քաղաքականութեան անկեղծութեան վրա, թէ այժմեան մինիստրութիւնը իրաւ միայն առաջին ժամանակները ուզում է աւելի փառաւոր լուսի մէջ Եւրոպայի առաջ ցոյց տալ —դա 'ի հարկէ մի հարց է, որ պիտի վճռվի ժամանակով: Gladstone այնպիսի մարդ չէ որ անսահման յարգանք ներշնչէր դէպի իր անձը: Եւ ամբողջ մինիստրութիւնը, թէև բաղկացած է յարգելի մարդիկներից, բայց զարմանալի մի յատկութիւն և դրօշմ է ստանում նոյն իսկ Gladstone-ի նախագահութեան պատճառով: Gladstone-ի առաջին անտակտութիւնը արդէն երևեցաւ նրա այն նամակի մէջ, որ նա գրեց գրաֆ Կայրօլիին իր հայեցքը մեկնելով Աւստրիայի մասին: Ցաւալի կը լինէր եթէ այս մինիստրութիւնը «ներողութիւն խնդրողների մինիստրութիւն» մականուն ստանար, ինչպէս ասում է անգլիական լրագիրներից մէկը: Ինչ և իցէ առժամանակ այն հարցի մէջ որ մեզ զբաղեցուցանում է, Յաճկաստանի վերաբերեալ ընտրած ճանապարհի մէջ դեռ ևս անտակտութիւն չէ եղել և Gôchen-ի նշանակութիւնը իբրև դեսպան Կ. Պոլսի մէջ առհասարակ ոչ միայն համակրութեամբ է ընդունվում, այլ և նախադուշակել է տալիս աւելի մեծ յաջողութիւն Եւրոպական ներգործութեան համար Թիւրքիայի մէջ: Goschen մի հմուտ ֆինանսիստ է մի կողմից, միւս կողմից շատ մօտ ծանօթ է արևելքի հետ և մանաւանդ ճանաչում է Թիւրքիան և եռանդոտ մարդ է համարվում, որ չը պիտի բաւականանայ միայն խոստումներ ընդունելու Թիւրքիայից, ինչպէս անում էր Լայարդը, այլ կը պնդի իր պահանջմանց վրա: Ամեն տեղ, ամեն լրագիրներում բարձրանում են Թիւրքիայի վերաբերութեամբ երեք գլխաւոր հարցեր, որոնք շատերի խօսքին նայելով պիտի անյապաղ լուծվեն՝ Յունաստանի և Ղենադրիայի սահմանների հարցերը և Հայաստանի մէջ մտցնելու վերանորոգութիւնների հարցը: Ամեն տեղ սկսում են հետաքրքրվել Հայաստանի վիճակով և այդ ուշադրութեանը գուցէ մասամբ առիթ տուեց սովը.... Երանի թէ սովը, որ ոչնչացնում է անհատները, փրկիչ սկիզբ երևայ ամբողջութեան, երկրի բարեկարգվելուն համար...

Եթէ այն լուրը որ բերում է «Daily News» իրաւացի է, որ դարձեալ Բերլինի մէջ պիտի հաւաքվի միջազգային մի յանձնաժողով Թիւրքիային վերաբերեալ երեք գլխաւոր հարցերը վճռելու համար, անկասկած անօգուտ չը պիտի լինէր եթէ կրկին ուղարկվէին պատգամաւորներ Թիւրքիայի Հայաստանից, որը ազգային ժողովի և պատրիարքարանի կողմից լիազօր իրաւունքներով կամ որոշված և մշակված հրահանգներով Ներկայանային: Ուր և լինի այսպիսի մի յանձնաժողով, հայերը չը պիտի անգործ մնային: Եւրոպայի քաղաքականութեան ծանօթ մի քանի հայեր աւելի գործ կարող են կատարել, թէև անմիջական ազդեցութիւն և ձայն էլ չունենան յանձնաժողովի մէջ, քան թէ դարձեալ ամբողջ յոյսերը դրվեն Եւրոպայի պետութիւնների ներկայացուցիչների վրա: Որքան էլ ծանօթ լինէին եւրոպական տէրութիւնները Հայաստանի պահանջների և թշուառ դրութեան հետ, նրանք չեն կարող Հայաստանի այնպիսի եռանդուն փաստաբաններ լինել, ինչպէս իրանք հայերը: Բացի սորանից հայերի բացակայութիւնը, կամ հեռու մնալը այսպիսի վճռողական րոպէում կարող էր անհոգութիւն, անտարբերութիւն, քաղաքական անհասունութիւն երևալ: Այսպիսի մի րոպէ նըշանաւոր է և չը պիտի ապարդիւն անցկենար:

Այստեղ, Բերլինի մէջ կը հաւաքվի միջազգային մասնաժողովը, թէ մի այլ տեղ, բայց այսպիսի մի ընդհանուր գործունէութիւն Եւրոպայի պետութիւնների կողմից Թիւրքիայի անհոգ վարմունքի դիմաց մի անհերքելի պահանջ է դարձել, որովհետև ինքն իրան թողած Թիւրքիան ոչ հնար ոչ էլ ցանկութիւն չը պիտի ունենայ իր վրա դրած պարտաւորութիւնները իրագործելու. միշտ այս կամ այն առիթ առաջ կը բերվի ինչի վճռված բարենորոգութիւնները չեն կարող իրագործվել: Իսկ ամեն կողմից համոզմունքը հաստատված է, որ այժմեան դրութիւնը տևել չէ կարող, որ Թիւրքիային հպատակ բոլոր երկիրները իրանց կորուստին են մատնում և մանաւանդ այն երկիրները որք, ինչպէս Հայաստան, հեռու են ամենայն յարաբերութիւնից Եւրոպայի հետ: Այսպիսի մի վճռողական դէպքում անգործ մնալ կը նշանակէր կամաւորապէս ենթարկվել յաւիտեան կամայականութեան, կը նշանակէր մի ինքնասպանութիւն գործել:

Այստեղ, Գերմանիայում հորիզոնը օրըստօրէ մթնանում է, յետադիմութիւնը արագ քայլերով առաջ է գնում: Կառավարութիւնը և ամենայն կուսակցութիւնները իրանց անընդունակութիւն են ցոյց տալիս ամեն քայլափոխում. Կառավարութիւնը ընդունակութիւն չունեցաւ յարմար ժամանակ պարլամենտական մի մեծամասնութիւն կազմել և այսպիսով ժողովրդի միջից մի զօրեղ պաշտպանութիւն ստանալ, այլ ամեն մի առանձին հարցի մէջ մի այլ կուսակցութեան հետ էր դաշնակցութիւն կապում, այնպէս որ վերջը ամեն կողմից թշնամիներ ունի, որոնք իրանք էլ զանազան բանակներին են պատկանում: Բայխստագը որ նորերումս վերջացրեց իր պարապմունքը այս սեսսիայի մէջ ոչինչ չարդիւնաբերեց. միայն բացասական հետևանքներին հասաւ և դժգոհութիւն զարթեցրեց ժողովրդի մէջ, որ մինչև անգամ սկսում է պարլամենտական սկզբի ապարդիւնութեան հաւատալ: —Այս օրերս պրուսական ազգային ժողովը գումարվեց և նորա պարապմունքի նախագիծը արդէն յայտնի է: Այն վստահ և հաստատ դիրքը, որ բռնում էր կառավարութիւնը պ. Ֆալկի մինիստր լինելու ժամանակ կղերի և մանաւանդ կաթոլիկ կղերի դիմացը, այն «Kulturkampf» (լուսաւորութեան կռիւ) որ մի նոր տեսք տուեց ամբողջ գերմանական կեանքին և ձգտումներին, Ֆալկի յաջորդի ձեռքում կորցրեց իր նշանակութիւնը: Փոքր առ փոքր հռչակաւոր «մայիսի օրէնքները» սկսեցին յետ առնուլ և ահա այժմ պրուսական պատգամաւորները պիտի մի նախագիծով զբաղվեն, որ գրեթէ բոլոր խլած իրաւունքները վերադարձնում է կղերին... «Kulturkampf» վերջանալու վրա է, պետութիւնը հակվում է կաթոլիկութեան առաջ... Եւ այդ իսկ այն ժամանակ երբ հարևան մի երկրում, Ֆրանսիայի մէջ հանրապետութեան կառավարութիւնը ամենայն ուժով ձգտում է ազատել պետութիւնը եկեղեցու ազդեցութիւնից, երբ նոր է ծագել այնտեղ այն ինչոր նրանք իրանք անուանում են «Kulturkampf Français»:

Անդրէաս Արծրունի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մայիսի: Երէկ հասաւ Պետերբուրգ յունաց թագուհին: Երէկ ուղևորվեցաւ Կ. Պոլիս պետական կանցլեր իշխան Գօրչակով:

Կ. ՊՕԼԻՍ, 19 մայիսի: Ուլեմների խորհուրդը Վելի-Մահմեդի մահվան պատժին հակառակ կարծիք տուեց:

ԼՕՆԴՕՆ, 19 մայիսի: Թէյրանից հեռագրում են որ գեներալ Սկոբելեվ ուղևորվեցաւ Զատ հետախուզութեան համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻԶԷՐ-ՍՏՕՈՒ. ԹՈՎՄԱՍ ՆՂԲՕՐ ՏՆԱԿԸ, խոս. երեխաների համար Պալմէր, Թարգ. օր. ն. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵԼ ԵՒ ՆՈՐԱՆ ՋՆՋԵԼՈՒ ՀՆԱՐՔՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով՝ Въ Тирфлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իմ ՍՈՒՄ ԲԱՏՕՎԻ տանը ԿՈՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ մ ո ր ե ղ է ն ն ե ր, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կ ո ն ֆ է տ ն ե ր արժան գնով, թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով: կոնֆէկտների գինը փութը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ОСОБА, знающая РУССКІИ, ФРАНЦУЗСКІЙ, НѢМЕЦКІЙ языки и начало МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на ПОЧТОВОЙ СТАНЦІИ въ ДАМСКОЙ комнатѣ.

ՄԻ ՏԻԿԻՆ, որ գիտէ ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն ԼԵԶՈՒՆԵՐԸ և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ սկիզբները, ցանկանում է ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ տեղ ստանալ: Հասցէն իմանալ ՓՕՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՆԱՆՑ սենեակում:

3—3

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցներում և թարգմանչի մօտ Ներսիսեան դպրոցում՝ համաշխարհական ողբերգակ Վիլիամ Շէկսպիրի

Օթէլլօ

Վենետիկի մաւր, ողբերգութիւն հինգ արարուածով Շէկսպիրի կենսագրութեամբ: III Թարգ. Ստեփանոսի Սուլխանեանց. գինն է 60 կոպ.:

1—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Րօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վեներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վ. գօրօվ վեներական և բողազի հ., Րէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուգկօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. գօրօվ վեներական և բողազի հ., Րօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրօվ վեներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Սանկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. գօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

«ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ.»

Առևտրական տունը սրանով յայտնում է, որ գնումներին մինչև նոր փոփոխութիւնը վճարում է.

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին	$4^{1}/_{2}$%
մինչև պահանջելը	$4^{1}/_{2}$%
2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով	6%
9 ամսով	$6^{1}/_{2}$%
1 տարով	$7^{1}/_{2}$%
$1^{1}/_{2}$ տարով	8%
2 տարով և աւելի	$8^{1}/_{2}$%
3) Մասնաւոր գնումներին առաջին կարգի պայ ունեցողներին	9%
Գումարներ տալու ժամանակ վերցնում է Մի ամսվայ ընթացքում	10%
« շաբաթվայ	9%

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է իշ. ԹՈՒՄԱՆՕՎՆԵՐԻ տանը, Ալէքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանգցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՕՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

2—3 (2)

ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտօրայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան այգու հանդէպ, Թումանօվի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաղաքային փօստայով, յայտնել իրան թէ ինչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակներր ստորագրված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետեւեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիու Թանդոյեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Գէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հաւլաբարի Ս. Մինաս եկեղ. Իզմիրեան ուսումն.
« 23 — Ջուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զօրաբաշի և Նամքռաեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հաւլաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

Երկու ֆրանսիացի ՕՐԻՈՐԴՆԵՐ ցանկանում են ընդունել իրանց մօտ երեխաներին դասեր տալու համար, առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը: ԴԱՍԵՐԸ կը լինեն ֆրանսերէն, գերմաներէն լեզուներից և մուզիկայից:

Հասցէն՝ Սօլօլակի, տուն Օրբելի: № 14.

3—3 (1



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մասների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներում և դրոգիստների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող ֆարմացևտ միգիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլեկտօրալնի փողոց, № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է ըզգուշանալ խարդախումներից:

8—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ(1)

Շաբաթ՝ մայիսի 24-ին, «ԱՇԽԱՏԱՆՔ» լրագրի խմբագիրը ռուս լեզուով հրապարակական դասախօսութիւն կանի ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ մասին: Կարդալու տեղը, ինչպէս նաև դասախօսութեան բովանդակութեան մանրամասնութիւնները ամենակարճ միջոցում կը յայտնվեն տպագրապէս: Տոմսակներն առաջուց առնել կարելի է Կենտրօնական գրավաճառանոցում, Զաքարիայ Գրիգորեանի, Վարդանեանի և Շահ-Ազիզեանի գրավաճառանոցներում:

2—3

Вышелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ **„Сборника свѣдѣній о Кавказѣ“**, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց ուսումնարանում ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ լինելու են ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱՐԳՈՎ.

Մայիսի 19 և 20 կրօն և Սրբազան պատմութիւն.
« 22 և 23 հայոց լեզու.
« 26 և 27 ռուսաց լեզու.
« 28 Թուաբանութիւն
« 30 և 31 Աշխարհագրութիւն, պատմութիւն և բնական գիտութիւններ:

1—5

ՆԻՒՈՒ-ԵՕՐՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլակերպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համարօտէ զմեզ համրելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիւ Եօրքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլ սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ալ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ատամանկի փողոցն Զուպալովին տունն, Երեւանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս ընկ նորբաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացունեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուզելու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանեմք նմանապէս մի և նոյն լեզւով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Г. Нейдлингеръ. Тифлисъ.

Գ. Նայտլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի: Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)

Дозволено Цензурою 20 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ս. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона